ԳՈՆԶԱԼՈ ԿԱՍՏՐՈ ԴԵ ԼԱ ՄԱՏԱ
Տնօրեն
Ստուգման հանձնաժողով

**IPN ՀԱՅՑ RQ 16/02**

24 Մայիսի, 2016

# ԾԱՆՈՒՑՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## Ստուգման հայտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր (P127759)

### Ամփոփում

1. 2016 թվականի մարտի 3-ին Ստուգման հանձնաժողովը («Հանձնաժողով») Հայաստանի ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի («Ծրագիր») ոռոգման համակարգեր ինքնահոս ոռոգման համակարգերով:[1] Հայտը ներկայացվել է տիկին Սառա Պետրոսյանի և տիկին Արուսյակ Այվազյանի կողմից իրենց և Գառնի գյուղի 531 բնակչի անունից, որոնք տուժել են Քաղցրաշեն ինքնահոս ոռոգման համակարգից («Հայտատուներ»): Հայտատուները խնդրել են Հանձնաժողովին 531 բնակչի ինքնությունը գաղտնի պահել: Հայտատուներին մտահոգում է ջրի անբավարարվածությունը ինքնահոս ոռոգման համար, Ազատ կիրճի ոչնչացումը, որն ազդեցություն է ունենում զբոսաշրջության վրա, ինչպես նաև խորհրդակցությանը և մասնակցությանն առնչվող հարցերը:

2. 2016 թ. մարտի 18-ին Հանձնաժողովը ստացել է առաջին Հայտը տվյալ Ծրագրի հետ կապված, բարձրացնելով մտահոգություններ այն մասին, որ Ծրագիրը, Գեղարդա լճի ինքնահոս ոռոգման համակարգի միջոցով, կարող է հանգեցնել ոռոգման ջրի անբավարարությանը Գողթ համայնքում: Առաջին Հայտով ներկայացվել էր նաև բողոք խորհրդակցության և մասնակցության բացակայության մասին: Առաջին Հայտի մասին Գրանցման ծանուցումը տրվել է 2016 թ. ապրիլի 26-

---

[1] Ծրագրի գնահատման փաստաթուղթ (ԾԳՓ) ենթադրում է «էլեկտրաէներգիայի մղման ոռոգման համակարգերի փոխակերպում ինքնահոս ոռոգման համակարգերով՝ դրանով իսկ վերացնելով պոմպային ծախսերը [...]»: ԾԳՓ, էջ 24:

ին: Քանի որ երկու դեպքում էլ Հայտերում բարձրացվում են հարցեր, որոնք վերաբերում են ինքնահոս ոռոգման համակարգի՝ շրջանակներում նույն Ծրագրին, Հանձնաժողովը՝ տնտեսական և արդյունավետության նկատառումներից ելնելով, մտադիր է կարգավորել երկու դեպքերը համատեղ:

**Ծրագիրը**

3. Ոռոգման համակարգի արդիականացման ծրագիրը 30 միլիոն ԱՄՆ դոլար գումարով (ՎԶՄԲ-ի նպատակային ներդրումային վարկ) հաստատվել է Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհրդի («Խորհուրդ») կողմից 2013 թվականի մայիսի 22-ին, որը պետք է ավարտվի 2017 թվականի հունիսի 30-ին: Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 37,5 միլիոն ԱՄՆ դոլար: Սա B աստիճանի ծրագիր է, որն առաջացրել է անվտանգության հետևյալ ռազմավարությունները՝ բնապահպանական գնահատում (OP/BP 4.01), վնասատուների կառավարում (OP/BP 4.09), ոչ կամավոր վերաբնակեցում (OP/BP 4.12), ամբարտակների անվտանգություն (OP/BP 4.37) և միջազգային ջրային ուղիների ծրագրեր (OP/BP 7.50):

4. Այս պահանջի համաձայն՝ Ծրագրի զարգացման նպատակն է «*նվազեցնել օգտագործվող էլեկտրաէներգիայի ծախսը և բարելավել թիրախային ոռոգման համակարգերի ոռոգման արդյունավետությունը*»: Հայտը վերաբերում է ճնշումային ոռոգման համակարգը ինքնահոս ոռոգման համակարգով փոխարինելու Ծրագրի բարելավման բաղադրիչին[2]: Ծրագիրը ֆինանսավորում է ինքնահոս ոռոգման համակարգերի շինարարությունը չորս շրջաններում, ներառյալ Քաղցրաշենի համակարգը, որը տվյալ Հայտի առարկան է, և Գեղարդալճի համակարգը, որը հանդիսանում է առաջին Հայտի առարկա:[3]

5. Քաղցրաշենի տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգը ջուրը վերցնում է Արտաշատի ջրանցքից և պոմպակայանի միջոցով բարձրացնում այն 180 մետրի վրա, ապա բաշխում այն ինքնահոս ձևով: Ծրագիրը նախատեսում է

---

[2] Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից՝ (i) ոռոգման համակարգի արդիականացում ($33,1 միլիոն), (ii) կառավարման տեղեկատվություն ($1,7 միլիոն) և (iii) Ջրօգտագործողների միությանը ($2,7 միլիոն):

[3] Քաղցրաշենի և Գեղարդալճի համակարգերը երկու տարբեր ոռոգման համակարգեր են, որոնց շրջանակներում Ծրագիրը կարուցում է տարբեր օբյեկտներ: Առաջին դեպքում Հայտատուները մտահոգված են Կարմիր գետի ջրի անբավարարվածությամբ, իսկ երկրորդ դեպքում Հայտատուները նշում են խմելու ջրի պակասը Ազատգետում:

ջրառու կառույցների շինարարություն Ազատ գետի վրա՝ Ազատ ջրամբարից հոսանքն ի վեր ինը կիլոմետրի վրա: Այն նաև կկառուցի 23,5 կիլոմետր երկարությամբ խողովակաշար, որը պետք է ջուրը հասցնի Քաղցրաշենի պոմպակայանի ներկայիս բաշխման ավազան, որտեղից ինքնահոս եղանակով ոռոգվում են ներկայիս համակարգի ոռոգման տակ գտնվող հողերը:

**Հայտում բարձրացված մտահոգությունները**

6. Հայտատուները պնդում են, որ Ծրագիրն ունի բացասական բնապահպանական և սոցիալական հետևանքներ, հանդիսանում է տնտեսապես անարդյունավետ, ռիսկային և անկայուն: Հատատուները պարզաբանում են, որ իրապարակային լսումներին Գառնիի բնակիչները նշել են, որ Ազատ գետի ջրի մակարդակը անընդհատ նվազում է, և, հետևաբար, ինքնահոս ոռոգումն արդեն անհնար է: Բնակիչները գտնում են, որ Ազատ գետը Ծրագրի պատճառով կարող է ցամաքել:

7. Հայտատուներին մտահոգում է նաև Ազատ կիրճը, որն ազգային նշանակությամբ տեսարժան վայր է հանդիսանում և Ազատ գետի վերին հովտի մի մասն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկ: Հայտատուները պնդում են, որ Ծրագիրը շարունակելու դեպքում Կիրճը կոչնչացվի: Նրանք պնդում են, որ Ծրագիրն անտեսել է զբոսաշրջության զարգացման համար Գառնիի բացառիկ կարևորությունը: Հայտի մեջ նշված է, որ աշխատանքներն Ազատ կիրճում կսկսվեն 2016 թվականի ապրիլի 2-ին, թեև կառավարությունը ոչ մի կերպ չի արձագանքել հանրության կողմից հնչեցված առաջարկներին, որոնք քննարկվել են Համաշխարհային բանկի ներկայացուցչությունում 2016 թվականի մարտի 11-ին: Այն ժամանակ Գառնիի բնակիչները երկու անգամ փակել են ճանապարհը, և ստիպել, որպեսզի իշխանությունները հեռացնեն կիրճից շինարարական տեխնիկան: Հայտատուները պարզաբանում են, որ աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են, սակայն ոչ մի պաշտոնական որոշում տվյալ հարցի շուրջ չի կայացվել:

8. Հայտի համաձայն՝ Գառնիի բնակիչները պարբերաբար հանդես են գալիս Ծրագրի դեմ, իսկ կառավարությունը խաբեությամբ է ստացել համայնքի հավանությունը: Հայտատուները պնդում են, որ Գառնիի բնակիչներին մի քանի անգամ վախեցրել են, այդ թվում՝ Ծրագրի իրականացման կապակցությամբ: Նրանք նշում են, որ հասարակությանը չեն տեղեկացրել հանրային լսումների մասին, և, որ Ծրագրի ընդդիմախոսներին թույլ չեն տվել մասնակցել նիստերին: Հայտատուները գտնում են նաև, որ փաստաթղթերը եղել են

կեղծված, առանձին դեպքերում ստացվել են խաբեությամբ, և ծախսերի ընթացակարգը չի եղել թափանցիկ:

9. Հայցատուները առաջարկում են ջրամբարում կառուցել արևային էլեկտրակայան կամ հողմատուրբիններ, փոխարինել 50-ամյա պոմպային կայանները ժամանակակից և էներգաարդյունավետ պոմպերով, որոնք նախատեսված են ջրի ներկայիս մակարդակի համար, կառուցել նոր ջրամբարներ Ազատ գետով հոսող ջուրը պահպանելու համար, և անցկացնել Ազատ գետի հնգամյա չափումներ, որից հետո միայն հնարավոր կլինի քննարկել Ծրագրի օգտակարությունը:

**Նախնական փորձաքննություն**

10. Հայցը ստանալուց հետո, Հանձնաժողովն իր նախնական փորձաքննությունն է իրականացրել և ճշտել, որ Հայցը ներկայացվել է երկու և ավելի անձանց կողմից, ինչպես պահանջում են Հանձնաժողովի գործառնական ընթացակարգերը: Բացի այդ, Հանձնաժողովը նշում է, որ այս խնդիրը Բանկի անձնակազմի ուշադրությանն է ներկայացվել դեռ 2015 թ. փետրվարի 5-ին, երբ ուղարկվել է նամակ Բանկի Հայաստանի ներկայացուցչություն, և 2016 թվականի մարտի 11-ին Հայաստանի ներկայացուցչությունում քննարկման ընթացքում:

11. Հանձնաժողովը նաև ստուգել է, որ Հայցը համապատասխանում է գրանցման պահանջներին. (i) խնդրանքը անլուրջ, անհեթեթ կամ անանուն չէ, (ii) Ծրագիրն աջակցվում է Բանկի կողմից, (iii) Ծրագրի առնվազն մեկ բաղադրիչ, որը Հայցի առարկա է, կարող է կապված լինել ենթադրյալ վնասի հետ, (iv) Բանկի ֆինանսավորումը Ծրագրին փակված չէ, (v) Բանկի ֆինանսական հատկացումները 95 տոկոսից քիչ են[4], (vi) Հայցի առարկան չի վերաբերում գնումների խնդիրներին, և (vii) Հայցը նախկինի նման չէ, որի համար Հանձնաժողովն արդեն առաջարկություն է արել:

12. Հանձնաժողովի ներկայացուցիչները 2016 թվականի մայիսի 5-ին հանդիպել են նաև Բանկի ղեկավարության հետ: Բանկի ներկայացուցիչը բացատրել է Հանձնաժողովին, որ նրանք կապի մեջ են եղել Հայցատուի հետ երկու տարի, տեղյակ էին խնդիրների մասին և ակտիվորեն համագործակցում էին համայնքի հետ:

13. 2016 թվականի մայիսի 23-ին Հանձնաժողովի ներկայացուցիչը հեռախոսազրույց է ունեցել Հայցատուների հետ նրանց խնդիրներն ավելի լավ հասկանալու համար:

---

[4] Խնդրանքը ներկայացնելու պահին Ծրագրին գումարի 72 տոկոսը հատկացված էր:

Հայտատուները տեղեկացրել են Հանձնաժողովին մի քանի դեպքերի մասին, երբ բնակիչներին վախեցրել, ստիպել են հաճախել Ծրագրի վերաբերյալ հանրային լսումներին և չբողոքել: Համաձայն վերջերս հրապարակված *Հաշվեհարդարի ռիսկերը նվազեցնելու և Հանձնաժողովի գործընթացի ժամանակ հաշվեհարդարի արձագանքելու ուղեցույցների*, Հանձնաժողովը կհամագործակցի Բանկի ղեկավարության հետ, կհետևի իրավիճակին և ըստ անհրաժեշտության կձեռնարկի լրացուցիչ միջոցառումներ:[5]

**Հայտի գրանցում**

14. Ինչպես նշված է ՎԶՄԲ Հանձնաժողովի որոշման («Որոշում») 17 կետում, «*Հանձնաժողովի նախագահը ստուգման պահանջը ստանալուն պես պետք է տեղեկացնի գործադիր տնօրեններին և Բանկի նախագահին*»: Այս ծանուցմամբ տեղեկացնում եմ ձեզ, որ ես գրանցել եմ այս Հայտը 2016 թվականի 24 մայիսին, որը նաև հանդիսանում է այս ծանուցագրի ամսաթիվը:

15. Հանձնաժողովի գրանցումը պատիժ չի նախատեսում կապված ստուգման հայտի հետ: Ինչպես վերը նշվել է, Հանձնաժողովը մտադիր է ուսումնասիրել տվյալ հարցը նախորդ Հայտի հետ համատեղ: Ինչպես ներկայացված է Որոշման 18 կետում, և «*Խորհրդի երկրորդ վերանայման Հանձնաժողովի եզրակացությունների*» (1999 Պարզաբանում) կետեր 2 և 8-ում, Բանկի ղեկավարությունը պետք է Հանձնաժողովին տրամադրի ստուգման հայտում բարձրացված խնդիրների պատասխանը 21 աշխատանքային օրվա ընթացքում: Քանի որ Հանձնաժողովը երկրորդ Հայտի մասին Բանկի ղեկավարությանը տեղյակ է պահել 2016 թվականի մայիսի 4-ին Բանկի ղեկավարությունը տեղեկացրել է Հանձնաժողովին այն մասին, որ երկու Հայտերում բարձրացված հարցերի պատասխանները կարող են տրամադրել Տեսչության մինչև 2016 թ-ի հունիսի 8-ը: Խնդրո առարկան, որ ղեկավարությունը պետք է պատասխանի Հայտին, շարադրված է 1999 Պարզաբանման 3-րդ և 4-րդ կետերում:

16. Ղեկավարության պատասխանը ստանալուց հետո Հանձնաժողովը, ինչպես նշված է 1999 Պարզաբանման մեջ և ինչպես ներկայացված է Որոշման 19-րդ կետում, «*կորոշի, թե արդյո՞ք Հայտը համապատասխանում է* [Որոշման] *12-14 կետերում սահմանված իրավասության չափորոշիչներին և*

---

[5] Հանձնաժողովի Հաշվեհարդարի ուղեցույցները կարող եք գտնել վեբ կայքում՝ http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelMandateDocuments/2016%20Retaliation%20Guidelines.pdf (մուտք՝ 2016թ. մայիսի 23)

*գործադիր տնօրեններին պետք է հարցն ուսումնասիրելու առաջարկություն անի»*: Հայտը համարակալվել է՝ IPN հայտ RQ 16/02:

Հարգանքներով,

Գոնզալո Դե Լա Մատա
Տնօրեն

Կից փաստաթղթեր

Պ-ն. Ջիմ Յոնգ Կիմ, Նախագահ
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

Գործադիր տնօրեններ և տեղակալներ
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

Տկն. Սառա Պետրոսյան